

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի, 2020 N 2

ՀԱՎԱՔՆԵՐ ԿԱՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի հավելվածի 22-րդ և 23-րդ կետերով սահմանված՝ հավաքներ կամ գործադուլներ իրականացնելու սահմանափակումների կիրառման ապահովումը վերապահել ԱՀ ոստիկանության պետին և ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին:

2. Արցախի Հանրապետության ողջ տարածքում կիրառել Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի հավելվածի 24-րդ կետով սահմանված սահմանափակումները 20 և ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հետևյալ հանրային միջոցառումների նկատմամբ՝

1) համերգներ, ցուցահանդեսներ, ցուցադրություններ, թատերական ներկայացումներ և սպորտային, մշակութային, կրթական այլ միջոցառումներ.

2) ժամանցային միջոցառումներ.

3) տոնական և հիշատակի միջոցառումներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումներ:

3. Ստեփանակերտի քաղաքապետին և շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետով սահմանված սահմանափակումների կիրառումը:

4. ԱՀ ոստիկանության պետին, ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին՝ համապատասխան տարածքային ստորաբաժանումների միջոցով օժանդակել Ստեփանակերտի քաղաքապետի և շրջանների վարչակազմերի ղեկավարների՝ սույն որոշման 3-րդ կետով սահմանված գործառույթների կատարմանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:


 Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ